ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
թիվ 3

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար ավտոմոբիլային վառելիք ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-25/01» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի.

ք.Գավառ 13 դեկտեմբերի 2024թ.

Սույն թվականի դեկտեմբերի 13-ին ժամը 11.00-ին «Գավառի պետական համալսարան» հիմնադրամում՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում, տեղի ունեցավ համալսարանի կարիքների համար ավտոմոբիլային վառելիք ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-25/01» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հանձնաժողովի հերթական նիստ:

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի նախագահ Լ"Գ" Սիրունյանը, հանձնաժողովի անդամներ Գ. Ն. Աբրահամյանը և Ս. Պ. Կարապետյանը:

Հանձնաժողովի քարտուղարը զեկուցեց 1-ին և 2-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչված «ՄԵԳԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրի նախագծի հաստատումն, ինչպես նաև որակավորման ու պայամանագրի ապահովումները ներկայացնելու մասին:

Հանձնաժողովը գնահատման թերթիկների հիման վրա գնահատեց, որ պայմանագրի նախագծի հաստատումը, ինչպես նաև որակավորման ու պայամանագրի ապահովումները կազմվել և ներկայացվել են սահմանված կարգով և ժամկետներում:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի պահանջներով՝ հանձնաժողովը

որոշեց՝

1-ին և 2-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից «ՄԵԳԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի և «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի միջև 2024 թվականի դեկտեմբերի 13-ին կնքել ավտոմոբիլային վառելիքի ձեռքբերման «ԳՊՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-25/01» ծածկագրով գնման պայմանագիր, որի ընդհանուր գինը կազմում է 2.600.000 (երկու միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ:

Որոշումն ընդունվել է կողմ՝ 3 և դեմ՝ 0:

Հանձանաժողովի նախագահ՝ Լ. Գ. Սիրունյան

հանձանաժողովի անդամ՝ Գ. Ն. Աբրահամյան

հանձանաժողովի անդամ՝ Ս. Պ. Կարապետյան

հանձանաժողովի քարտուղար՝ Ս. Բ. Ղարաբաղցյան